ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » հունիս 2024թ. No 3482 - Ա

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԼԵՍ ԼԱԲՈՐԱՏՈՒՐԵՍ ՍԵՐՎԻԵ ԻՆԴՈՒՍՏՐԻ, 905, ՍԱՐԱՆ Ճ., 45520 ԺԻԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ,ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԼԵՍ ԼԱԲՈՐԱՏՈՒՐԵՍ ՍԵՐՎԻԵ, 50, ԿԱՐՆՈ Փ., 92284 ՍՈՒՐԵՆ ՍԵԴԵՔՍ, ՖՐԱՆՍԻԱ «ՊՐԵՍՏԱՐԻՈՒՄ Ա ՊԵՐԻՆԴՈՊՐԻԼ (ՊԵՐԻՆԴՈՊՐԻԼԻ ԱՐԳԻՆԻՆ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 5ՄԳ; (30) ՊԼԱՍՏԻԿԵ ՏԱՐԱՅՈՒՄ» ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵԱՏՄ 2016թ. նոյեմբերի 03-ի թիվ 78 որոշում, հավելված N 19, կետ 2.1.3, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության EL01/608-24 առ 11.06.2024թ. բացասական եզրակացությունը՝ Ֆրանսիայի Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիդի արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Լես Լաբորատոիրես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս, Ֆրանսիա «Պրեստարիում Ա պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին) դեղահատեր թաղանթապատ 5մգ; (30) պլաստիկե տարայում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 000574 բացասական եզրակացությունը, առ այն, որ համաձայն ռեֆերենտ երկրի եզրակացության, իրավական հիմք՝ ԵԱՏՄ 2016թ. նոյեմբերի 03-ի թիվ 78 որոշում, հավելված N 19, կետ 2.1.3, դեղի հետգրանցումային փոփոխության գրանցումը մերժվում է:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Ֆրանսիայի Լես Լաբորատոիրես Սերվիե ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիդի արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Լես Լաբորատոիրես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս, Ֆրանսիա «Պրեստարիում Ա պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին) դեղահատեր թաղանթապատ 5մգ; (30) պլաստիկե տարայում» Եվրասիական տնտեսական միություն

գրանցման ընթացակարգով գրանցված դեղի հետգրանցումային փոփոխության գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157